«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան ՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ ՝ Վարդուհի Ռաֆաելյան

Ուսումնական հաստատություն ՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3
ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 3
ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ և ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 5
ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ 7
ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 8
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ 10
ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒՐՅՈՒՆ 17
Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Գիտենք որ աշխարհը բազմալեզու է քանի որ ամեն լեզու մի ուրույն ազգային մտածողության ու մշակույթի խտացած պատկեր է ,ապա բնական է ,որ այս բազմազանությունն իր ամբողջ գեղեցկությամբ ու հետաքրքրությամբ, որոշակի խոչընդոտ է ստեղծում մարդկային արդյունավետ հաղորդակցման համար:

Աշխարհի մարդկությունը մեծ ջանքեր է գործադրում այս խոչընդոտը հաղթահարելու համար: Մարդիկ ակտիվորեն սովորում են օտար լեզուներ և ուսումնասիրում են այդ լեզուները կրողների մշակույթն ու ավանդույթները: Այս ամենն արվում է այն լուրջ գիտակցությամբ, որ մեր մոլորակի վրա մարդիկ այլևս չեն կարող ապրել իրարից մեկուսի ,որ ինքնաճանաչման լավագույն միջոցը կողքինիդ ճանաչելն է,որն էլ իրականացնելու համար խիստ անհրաժեշտ է խոսքային հաղորդակցութան հմտություններին տիրապետելը:

. Բանավոր հաղորդակցություն
. Լսելու հմտություններ
. Հստակություն ու կազմակերպում
. Հարմարվողականություն
. Ոչ բանավոր հաղորդակցություն
. Մշակութային զգայունություն

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օտար լեզուն՝ որպես ուսումնական առարկա, նպաստում է աշակերտների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց խոսքն ու մտածողությունը, ճանաչողական կարողությունները, հարստացնում է նրանց պատկերացումները ուսումնական տարբեր առարկաներից:

Օտար լեզվի յուրացումը օգնում է ժողովուրդների փոխըմբռնմանը, նպաստում տարբեր երկրների միջև բարեկամական, գործնական ու մշակութային կապերի հաստատմանը:

Մեր օրերում, երբ աճում ու ամրապնդվում են մեր երկրի միջազգային կապերը այլ երկրների հետ, օտար լեզվի ուսուցումը դպրոցում ավելի ու ավելի լայն թափ է ստանում: Այն պարտավորեցնում է ավելի պատասխանատու ու լուրջ աշխատանք կատարել, որպեսզի տվյալ լեզուն հասանելի ու մատչելի դառնա յուրաքանչյուր աշակերտի համար: Ուսումնառության ավարտին աշակերտը պիտի զինված լինի

լեզվական և երկրագիտական որոշակի գիտելիքներով, խոսքային հմտություններով և կարողություններով, որոնք հնարավորություն կընձեռնեն աշակերտին համապատասխան իրավիճակներում հաղորդակցվել օտար լեզվով, որի հիմքում էլ բնականաբար խոսքային հաղորդակցումն է:

Աշակերտները պետք է կարողանան տիրապետել նաև տվյալ երկրի լեզվամտածողությանը նաև սոցիալ-մշակութային նկարագրին: Երբ խոսում ես այդ լեզվով, ուրեմն զուգահեռաբար մտածում ես այդ լեզվով:

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ և ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Խոսքային հաղորդակցումը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

- շրջապատի հետ կապի մեջ մտնելու ցանկության կարիքը և շփման կանոնների իմացությունը / ես ուզում եմ/
- շրջապատի հետ հաղորդակցվելու կանոնների իմացությունը/ ես գիտեմ/
- հաղորդակցումը կազմակերպելու ունակությունը/ ես կարող եմ/

Վերոնշյալ բաղադրիշների ձևավորման համար էլ ուսուցչի առջև դրված են երեխաներին հաղորդակցվել սովորեցնելու, միմյանց հետ համագործակցելու, իսկ անհրաժեշտության դեպքում շփման ունակությունները և կարողությունները զարգացնելու խնդիրներ: Ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանն անդրադարձել են դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում: Կան բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը: Ն.Գ. Չերնիշևսկին սահամնել է, որ ուսուցչի խոսքը դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է: Ուսուցչի դերը խոսակցական հաղորդակցության ընթացքում Առանցքային է արդյունավետ ուսուցման և տեղեկատվության փոխանցման համար: Ուսուցչի խոսքի ձևը և նրա դերը խոսակցական հաղորդակցութըան համատեքստում՝

1Հստակություն և կառուցվածք:

- Ուսուցիչը պետք է հստակ խոսի, բառերը ճիշտ արտասանի, որպեսզի ապահովի, որ ուղերձը հեշտությամբ ընկալվի աշակերտների կողմից:
- Հստակ ներածությամբ, հիմնական կետերով և եզրակացույամբ լավ կառուցված ձևաչափի օգտագործումն օգնում է աշակերտներին հետևել դասախոսության ընթացքին:

2. Հոդակապ և արտասանութըուն:

Ճիշտ արտասանությունն ու խոսքը չափազանց կարևոր են թյուրիմացություններից խուսափելու և բովանդակության ճշգրիտ ըմբռնումն ապահովելու համար:

3. Տոնը և տեմպը.

- Ուսուցչի ձայնի տոնը և տեմպը պետք է համապատասխանի բովանդակությանը: Շեշտադրման, խանդավառության կամ լրջության համար համապատասխան հնչերանգներ օգտագործելը կարող է ներգրավել աշակերտներին:
- Չափավոր տեմպով խոսելը թույլ է տալիս աշակերտներին մշակել տեղեկատվությունը առանց շտապելու, ծանրաբեռնված զգալու:

4 Ներգրավվածություն և փոխազդեցություն.

- Հումորներ, իրական կյանքի օրինակներ և առնչվող սցենարներ ներառելը կարող է գրավել աշակերտների հետաքրքրությունը և լուսաբանել հիմնական հասկացությունները:
- Խրախուսող հարցերը , քննարկումները և աշակերտների հետ շփումները խթանում են ներգրավվածությանը և ակտիվ մասնակցությանը:

5.Տեսողական օժանդակ միջոցներ և ոչ բանավոր հաղորդակցություն.

- Տեսողական օժանդակ միջոցների օգտագործումը , ինչպիսիք են սահիկաշարերը,տեսանյութերը, կառող են բարելավել ըմբռնումը և տեսողական ենթատեքստ ապահովել բարդ թեմաների համար:

Ուսուցչի ոչ խոսքային նշանները , ինչպիսիք են ժեստերը և դեմքի արտահայտությունները , լրացնում են բանավոր հաղորդակցությունը և փոխանցում խանդավառություն կամ շեշտադրում:

6. Ակտիվ ունկնդրում և արձագանք.

- Ուսուցիչը պետք է ակտիվորեն լսի աշակերտների հարցերն ու արձագանքները՝ ցույց տալով, որ նրանց խոսքը գնահատվում է և խթանում երկկողմանի երկխոսություն:

7. Բարդ հասկացությունների պարզեցում.

Բարդ հասկացությունները հասկանալի մասերի բաժանելը օգնում է աշակերտներին ավելի ավելի արդյունավետ կերպով հասկանալ նյութը:

8. Հարմարվելով աշակերտներին

Դասախոսուրյան ոճն ու բովանդակությունը հարմարեցնելը՝հիմնված աշակերտների նախապատմության, թեմայի հետ ծանոթության և ուսուցման նախասիրությունների վրա, խթանում է հաղորդակցությունը:

9 Հստակություն և կրկնության ապահովում

- Հիմնական կետերի և հասկացությունների կրկնությունն ուժեղացնում է ուսումը և օգնում աշակերտներին պահպանել տեղեկատվությունը:

10. Աջակցող միջավայրի ստեղծում.

Ուսուցչի վերաբերմունքը, մատչելիությունը և խրախուսումը նպաստում են դրական և բաց ուսումնական մթնոլորտի ձևավորմանը;

11. Հետադարձ կապ և գնահատում.

- Խոսակցական հաղորդակցության ընթացքում ուսուցիչը կարող է անհապաղ արձագանքել աշակերտների պատասխաններին կամ հարցերին ամրապնդելով ուսումը և պարզաբանելով կասկածները:

12 Անդրադառնալ լեզվական խոչընդոտներին.

- Եթե օտարերկրյա աշակերտների կամ ոչ մայրենի լեզվով խոսողների պատճառով լեզվական խոչընդոտներ կան, ուսուցիչը պետք է նպատակաուղղվի հստակ լեզվին և տա անհրաժեշտ բացատրություններ:

Արդյունավետ հաղորդակցութը ունը ներառում է գրավիչ, ներառական և աջակցող միջավայրի ստեղծում, որտեղ աշակերտները կարող են հասկանալ, պահպանել և կիրառել ներկայացված տեղեկատվությունը: Ուսուցչի խոսքը, տոնայնությունը, փոխազդեցությունը և ընդհանուր մոտեցումը զգալիորեն ազդում են աշակերտների սուսուցման փորձի և արդյունքների վրա:

ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Խոսքային հաղորդակցումը լեզվի ամենակարևոր բաղադրամասն է: Այն օժանդակում է կարդալու,գրելու և լսելու ունակությունների զարգացմանը: Հաղորդակցումը կատարվում է հնչյունային կենդանի խոսքի շնորհիվ: Դպրոցում ուսուցումը կառուցվում է հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Մեր օրերում, դպրոցում խոսքային հաղորդակցումը օտար լեղվի ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն հանդիսանում է և ուսուցման նպատակ և ուսուցման միջոց: Խոսքային հաղորդակցման դերը հատկապես մեծ և կարևոր է սկզբնական աստիճանում, քանի որ խոսքային հաղորդակցումը կարող է ապահովել սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան:

Ուսուցման սկզբնական աստիճանը խոսքային հաղորդակցման նախապատրաստական շրջանն է, իսկ հիմնական խնդրի լուծումն իրականացվում է հաջորդ աստիճաններում, երբ սովորողները տիրապետում են բառերի որոշակի քանակի,որը նրանց հնարավորություն է տալիս արտաբերել ոչ միայն առանձին նախադասություններ,այլ կառուցել կապակցվաշ խեսքի հատվածներ: Ուսուցման սկզբնական աստիճանում խոսքային հաղորդակցումը ստեղծագործական աշխատանք չի պահանջում,բայց հետագայում այն սովորողից պահանջում է մտածելու և ստեղծագործելու մեծ ակտիվություն:

Խոսքային հաղորդակցումը հոգեբանական բարդ պրոցես է , որն ունի երկու կողմ. ունկնդրել/ռեցեպտիվ/ և խոսել/ ռեպրոդուկտիվ/: Հաղորդակցվելը , որպես խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ , ունի իր միջոցները և իրականացման եղանակները:

Խոսքում լեզուն օգտագործվում է որպես մտքի ձևավորման և ձևակերպման սոցիալապես մշակված միջոց: Խոսքային հաղորդակցման ռեպրոդուկտիվ կողմը հաղորդացական երկու կողմ ունի՝ մենախոսություն և երկխոսություն:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մենախոսությունը խոսքի կազմակերպված ձևն է, որն իրենից ներկայացնում է մեկ անձի խոսքն ուղղված որևէ լսարանի: Այն խոսքի ակտիվ և ազատ ձևն է:

Դրա իրականացման համար խոսողն արտահայտում է որևէ բովանդակություն, որի հիման վրա կազմում է արտահայտությունը: Մենախոսությունը սովորաբար լինում է նախօրոք պլանավորված: Մենախոսության ընթացքում խոսողն ինքն է որոշում արտահայտության շավալը և շարադրանքի հաջորդականությունը: Մտքերը շարադրելիս սովորողը պետք է նախապես իմանա, թե ինչի մասին է խոսելու: Լեզվական և ոչ լեզվական միջոցների ընտրությունը պայմանավորված է հաղորդական իրադրությամբ և խոսողի անհատական առանձնահատկություններով, նրա կրթական մակարդակով, հուզական վիճակով և այլ գործոններով :

Մենախոսության ընթացքում խոսողն ինքն է որոշում արտահայտության ծավալն ու շարադրանքի հաջորդականությունը: Մենախոսությունը ծավալվում է նախապես ծրագրավորված պլանով: Մտքերը շարադրելիս սովորողը պետք է նախապես իմանա, թե ինչի մասին է խոսելու:

Մենախոսությունն ունի խոսքային հաղորդակցման հետևյալ ֆունկցիաները.

1.Ինֆորմատիվ՝ նոր ինֆորմացիայի հաղորդում՝ առարկաների, իրադարձությունների նկարագրություն:

2.Ներգործող՝ համոզմունքի, մտքի, վերաբերմունքի հիմնավորում:

3.Հուզազգացմունքային ներգործություն:

Մենախոսության ուսուցումը կարող է ընթանալ հետևյալ փուլերով.

Առաջին փուլի վարժությունների նպատակն է տարբեր խոսքային նմուշների գործածումը տվյալ թեմայի շուրջ, այսինքն՝ ըստ թեմայի մեկ ավարտված միտք արտահայտելու կարողության զարգացումը:

Երկրորդ փուլում ուշադրության կենտրոնում է գտնվում նախադասությունների միջև եղած տրամաբանական կապը: Աշակերտները կազմում են երկուսից ավելի նախադասություններ: Մեկը լրացնում է մյուսին, բացատրում և ճշգրտում առաջին նախադասության մեջ արտահայտած

միտքը. այսպիսով՝ մտքերի մեջ առկա են պատճառահետևանքային կապերը:

Մենախոսության կարողությունների զարգացման երրորդ փուլը բնորոշվում է նոր խնդիրներով և ինքնուրույն արտահայտությունների ծավալի ավելացմամբ: Այս փուլում աշակերտները պետք է կարողանան արտահայտել իրենց մտքերը, վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ:

Ժամանակակից տեխնիկական միջոցները լայն հնարավորություն են ընձեռում դասապրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար:

Մենախոսության զարգացման համար աշակերտներին առաջարկում եմ դիտել « Մեր արեգակնային համակարգի մոլորակները» ֆիլմը: Միաժամանակ տեսնելն ու լսելն, իհարկե, ավելի արդյունավետ է , քան միայն լսելը: Տեսաֆիլմը, առաջին հերթին պետք է մոտիվացիոն նշանակություն ունենա: Այս պարագայում ամենակարևոր խնդիրը ֆիլմի ճիշտ ընտրութը ունն է: Ճիշտ ընտրվաշծ ֆիլմը ոչ միայն խոսելու հարուստ նյութ է տալիս, այլև ապահովում է դասի ստեղծագործական պլանը: Տեսաֆիլմի հետ աշխատելիս աշակերտներին տալիս եմ շատ ազատություն : Նրանք ազատ են իրենց դատողություններում և մեկնաբանություններում: Իմ հիմնական խնդիրն եմ համարում ուղղորդել նրանց արտահայտելու իրենց սեփական մտքերը, չմիջամտելով և զերծ մնալով ուղղումներ կամ միջամտություններ կատարելուց: Ինձ մոտ նշումներ եմ անում: Սխալները քննարկում ենք կամ դասի վերջում կամ հաջորդ դասին:

Ֆիլմի հետ աշխատանքը արդյունավետ դարձնելու համար նախապես մշակում եմ դրա հետ աշխատելու պլան:Քարտերի վրա նախապես գրում եմ տեսաֆիլմում գործածվող բառերն ու արտահայտությունները, որոնք էլ օգնում են աշակերտներին պատասխանել քարտի վերջում գրված հարցերին:Այս առաջադրանքները կատարելիս աշակերտները սովորում են և հմտանում իրենց մտքերն արտահայտել օտար լեզվով:

Այսպիսով ՝ մենախոսության կարողութը ունները զարգացնելու մեթոդական համակարգը կառուցված է մտավոր գործողութը ունների աստիճանական բարդացման վրա: Մենախոսությունը ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ՝նկարագրել, պատմել , տեղեկացնել, բնութագրել:օգտագործելով յուրացված բառապաշարը ՝ քերականական

կառուցվածքը, խոսքային նմուշները, աշակերտը պետք է կարողանա արտահայտել իր միտքը,վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ:

Բնական հաղորդակցման պայմաններում մենախոսությունը « մաքուր ձևով» հազվադեպ է հանդիպում:Առավել հաճախ այն համադրվում է երկխոսության հետ:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Խոսքային հաղորդակցման ուսուցումը միջնակարգ դպրոցում օտար լեզվի ուսուցման կաևորագույն նպատակներից մեկն է: Փորձը ցույց է տալիս ,որ աշակերտները դժվարությամբ են տիրապետում խոսքային հաղորդակցմանը:

Երկխոսության ուսուցումը խոսքային հաղորդակցման կարևորագույն խնդիրներից մեկն է:

Երկխոսությունը՝ որպես հղորդակցման ձև, երկու կամ ավելի զրուցակիցների միջև մտքերի փոխանակում է: Այն հիմնականում նախապատրաստված չի լինում: Աշակերտը պետք է կարողանա ոչ միայն լսել և հասկանալ օտար լեզվով արտահայտված ուրիշի խոսքը , այլ նաև պետք է կարողանա զրույց վարել ինչպես դասընկերների , այնպես էլ օտարերկրացիների հետ:Դրան հասնելու համար պետք է հիմնականում աշխատել երկխոսության հմտությունների զարգացման վրա:

Բավական չէ աշակերտներին միայն ծանոթացնել երկխոսության առանձնահատկություններին: Կարևորն այն է ,որ նրանց հնարավորություն տանք ազատ օգտագործել իրենց լեզվական նյութը զանազան խոսքային իրավիճակներում և հաղորդակցական վարժություններում: Դա հարկավոր է կատարել այնքան ժամանակ, մինչև աշակերտները կարողանան նույնանման բնական, կենդանի իրավիճակներում հանպատրաստից խոսք վարել զրուցակցի հետ: Հաճախ աշակերտներին շփոթության մեջ են գցում թե օտարերկրացու խոսքի առանձնահատկությունները , թե ձայնը, թե խոսքի արագությունը…….

Երկխոսության ընթացքում հաջորդաբար տեղի է ունենում ունկնդրման և վերարտադրման պրոցես: Աշակերտները պետք է կարողանան հաղորդել փաստեր, հետագայում արտահայտել իրենց վերաբերմունքը այդ փաստերի նկատմամբ, գնահատական տալ: Եթե սկզբնական շրջանում

կարելի է բավարարվել միայն հարց ու պատասղանով և կոնկրետ փաստերի շուրջ տարվող զրույցով, ապա հետագայում պահանջվում է ոչ միայն հարց տալ, այլ նաև օգտագործել ռեպլիկներ , որոնց նպատակն է դրդել զրուցակցին շարունակել երկխոսությունը:

Ցածր դասարաններում երկխոսության ժամանակ յուրաքանչյուրին բաժին է ընկնում առնվազն երկու նախադասություն: Յուրաքանչյուրի ռեպլիկը բաղկացած է ռեակցիայից `զրուցակցի արտահայտած մտքի նկատմամբ,իսկ երկրորդ նախադասությունը զրուցակցին դրդում է շարունակել խոսակցությունը: Այս դեպքում երկու զրուցակիցներն էլ գտնվում են հավասար պայմաններում: Յուրաքանչյուրը և պատասխանում է և հարց է տալիս ,առաջարկություններ անում , ընդունում կամ մերժում է դրանք, արտահայտում է իր մտքերը: Երկխոսությունը զարգացնելու համար պետք է ստեղծել իրավիճակներ``

1. Ողջույնի իրադրություն.
   Good morning
   Hello
   Hi
   How do you do?
   How are you?
2. Խնդրանք
   Can you help me?Could / would you….?
   Could possibly….?
   Would you mind……?

3.Հրավեր
   Do you want to…….?
   Are you free…….?
   Are you doing anything…..?
   Come….. with me….. .
   Why don't we…….?

| 4.Ներկայանալ,ծանոթանալ
   Let me introduce myself.
   Nice to meet you.
   Good to see you.
   It's nice/ good/ to meet/ see/ you.
   Pleased to meet you.

5 .Թույլտվություն /պաշտոնական, ոչ պաշտոնական/
   May I come in?
   May I go out?
   Can I take your pen?

6 Հարցում, առաջարկություն
   How about …….? / What about……?
   What if……?
   Shall we…….?
   Let's……. .

I think we should …… .
Perhaps/Maybe we should hire smb …… .

7Որևէ հաղորդում , նորություն

Do you know that ….. ?
Have you heard that….?

8 Զարմանք

Oh my God
Wow
No way.
Are you kidding?
Are you serious?
I can't believe it.
Unbelievable.
It.s impossible.

9. Համաձայնություն

I truly/ honestly agree.
I really think/ believe so.
I couldn't agree more.
I have come to the same conclusion.
I hold the same opinion.
I have no objection whatsoever.
I see what you mean and I agree.

10. Կարծիքի հայտնում

In my opinion .
To my mind.
I would say that….
Personally I feel that….
I think/ I guess that….
Speaking personally…..
I assume that….

11 Ներողություն խնդրել

Sorry.
Sorry I am late.
I am awfully / truly sorry.

12 Համաձայնություն կամ մերժում որևէ առաջարկությանը

With pleasure.
I don't mind but…..
Sorry I can't.
Unfortunately……

13 Շնորհակալություն հայտնել

Thank you.
I am grateful for your … .
I sincerely appreciate.
Please accept my deepest thanks.
My sincere thanks.

Ուսուցման սկզբնական փուլի վարժուրյուններում գործածվում են միևնույն պատասխանները,որոնք նպաստում են պատասխանների օգտագործման ավտոմատացմանը:

Երկխոսության հաջորդ քայլը զրույց վարելն է:Այս դեպքում առաջարկվում է երկխոսության թոման , Ընտրվում է բանալի բառերը և պատասխանները, տրվում է երկխոսուրյան սխեման, որոշ բառերի , բառակապակցությունների , պատասխանների բացթողումներով:

Երկխոսության հաջորդ փուլը զրուցակցի խոսքին արագ, գիտակցաբար արձագանքելու և խոսակցությունը շարունակելու կարողությունների զարգացումն է:

Երկխոսության վերջին փուլում աշակերտներն ինքնուրույն են վարում երկխոսությունը:Այս աշխատանքը ամրապնդելու համար մի խմբին բաժանում եմ քարտեր,որոնց վրա գրված են երկխոսության հարցերը:Աշակերտները պետք է գրեն ինչպես բաց , այնպես էլ փակ հարցերի պատասխանները:

What is your name?

How old are you?
Where do you live?
Do you go to school?
What grade are you in?

Մյուս խմբին բաժանում եմ քարտեր , որոնց վրա գրված են պատասխանները: Աշակերտները պետք է վերականգնեն հարցերը:

My name is….
I am nine years old.
I live in Abovyan.
Yes,I do. I go to school.
I am in the third grade.

Կարելի է կատարել աշխատանք օրվա կերակուրների շուրջ. նախաճաշ, ճաշ,ընթրիք: օրինակ՝

How many meals do you have a day?
When do you have breakfast, dinner, supper?
What do you have for breakfast, dinner , supper?
Why do you like dinner?

Կարելի է վարել առօրյա զրույցներ՝օգտագործելով տվյալ թեմային համապատասխան բառեր, բառակապակցություններ և պատասխաններ:

Օրինակ՝՝

It’s very hot today.What about having ice cream.?

With pleasure,I would like to have strawberry ice cream.

Այսպես կարելի է շարունակել երկխոսությունը:Խոսքային իրադրություններն անհրաժեշտ է միշտ փոփոխել:Այն զարգացնում է աշակերտների՝ իրադրության մեջ կողմնորոշվելու կարողությունը: Երկխոսությունը զարգացնելու լավագույն միջոցներից են դերային խաղերը:

ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Հաղորդակցական կարողությունների արդյունավետ ձևավորմանը նպաստում են դերային խաղերը: Դերային խաղերի նպատակն է ինչ-որ բան սովորեցնել աշակերտներին, մարզել և զարգացնել նրանց մտավոր կարոցությունները: Յուրաքանչյուր դերային խաղում առաջադրվում են այնպիսի խաղեր, որոնց լուծումը պահանջում է որոշակի մտավոր լարվածություն,մտավոր ջանքեր: Կատարելով խաղի խնդիրը՝ աշակերտը ակտիվացնում է իր մտածողությունը, մարզում իր հիշողությունը դիտողականությունը: Դերային խաղի համար անհրաժեշտ է ընտրել իրադրություններ, որոնք կարող են լինել իրական, նաև այնպիսին ,որը կխթանի երեխաների երևակայությունը: Դերային խաղը հնարավորություն է տալիս տարբեր համատեքստերում յուրացնել նաև մի ամբողջ շարք կառուցվածքներ, հասկացություններ և գործառույթներ:

Հաղորզարգացման, և անհատական գործունեության կարողությունների զարգացման, ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար նպատակահարմար է ուսուցումը կազմակերպել խաղային, մրցակցային իրավիճակներ ստեղծելու միջոցով: Կարելի է օգտագործել կարճ տեսաֆիլմեր,որոնք աշակերտների մոտ կառաջացնեն ակտիվություն, մոտիվացիա:Դերային խաղը պահանջում է մանրակրկիտ պլանավորում:

Գնումներ թեման յուրացնելուց հետո աշակերտներին տալիս եմ վաճառողի, գնորդի, գանձապահի դերերը աշակերտների ցանկությամբ և ընտրությամբ:Կրկնում ենք խանութների անունները:Ցածր դասարաններում բանջարեղենների, մրգերի տեսակների ,սննդամթերքների անունները:Հինգերորդ և վեցերորդ դասարաններում նույն աշխատանքը կատարում ենք հագուստի տեսակների և հագուստի խանութների հետ:

Աշակերտներին տրվում է ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն:

Shop assistant:	Good day. What can I do for you?
Customer	I want to buy a pound of sugar, Two bars of chocolate,a loaf of bread, a bottle of coca cola.
Shop assistant	Here you are.Please pay at the cash desk.
Customer	Where is it?
Shop assistant	Over there on the right.
Customer	Thank you.

Կամ՝

Customer Good day.
Shop assistant Can I help you?
Yes ,please.I want a pair of black shoes.
Do you want them with laces or slip on.
With laces , please.
What size?
36, I think but but would you measure my foot?
Certainly .Yes ,it's 36.Wow…… what about these?
Well, they feel a bit tight here.Can I try on a different pair.
Of course , try these.
They are a better fit but I don't like the colour. They are too shiny.Have you got them in some other colour?
Yes , we have. We have white,grey, brown.
Try these brown ones.
Thank you.I like these better and they fit nicely. I'll take Them.

Դասագրքերում ընդգրկված «UNIT>>-ներում թեմաները թելադրում են դերային խաղերի լայն հնարավորություններ: «Enjoying Various National Cuisines», «Welcome to Armenia», «Being a Tiny Part of the Universe», «Let's Think Green and Be nature Wise», «Having a Healthy Mind, a Healthy Body, Healthy Spirit», «I Know a Lot about English and American Customs, Traditions and Celebrations» Աշակերտները քննարկում և ամբոջացնում են տվյալ թեմայի ուսուցման ժամանակ ձեռք բերած գիտելիքներն ու տեղեկատվությունը: Թեման քննարկելուց առաջ աշակերտների ցանկությամբ ու ընտրությամբ ընտրում ենք զրուցավար և քննարկվող հարցերի մասնակիցներ: Բանավեճը վարելիս օգտագործում են հետևյալ արտահայտությունները՝

Do you agree with me?
What do you know about….?
Sorry, for interrupting you.
But I think…….
I quite agree with your opinion
What is your personal opinion about it?

Ստեծվում է անկաշկանդ և ազատ մթնոլորտ:Աշակերտները նաև անիմացիոն ֆիլմեր են ստեղծում կամ ուրվագծային քարտեզի վրա նավի կապիտանը իր անզնակազմով ներկայացնում է ,թե ինչ երթուղով են այդ նավերը թեյ տեղափոխել և ինչ դժվարություններ են հաղթահարել:օրինակ՝ «Tea Clipper Races>>

Քննարկման ժամանակ մասնակիցներն շատ են ոգևորվում :Երբեմն էլ լինում են աշակերտներ ,որոնք մայրենի լեզվով են արտահայտում իրենց կարծիքը: Հետաքրքիր է լսել յուրաքանչյուրի կարծիքը:

Դերային խաղերը պետք է դառնան ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասը, քանի որ դրանք խթանում են աշակերտների ուսումնական դրդապատճառները: Դերային խաղերի հաճախակի և հետևողական կազմակերպումը ավելի հետաքրքիր, բովանդակալից և արդյունավետ են դարձնում դասապրոցեսը: Շատ հաճախ դերային խաղերը օգնում են բացահայտելու աշակերտների դերասանական տաղանդը:

ԵԶՐԱԿԱՑՈՒՐՅՈՒՆ

Խոսքային հաղորդակցումը երկխոսության հիմնարար մասն է, որը թույլ է տալիս մարդկանց կիսել իրենց գաղափարները, հույզերն ու գիտելիքները միմյանց հետ: Այն շատ կարևոր է հարաբերություններ կառուցելու, տեղեկատվության փոխանակման և զգացմունքների արտահայտման համար:

Ամփոփելով, ցանկանում եմ նշել, որ դպրոցում դասավանդման բոլոր փուլերում՝ տարրական, միջին և ավագ դպրոցում, աշակերտների խոսքային հաղորդակցման ուսուցման, բառապաշարի հարստացման, արդյունավետ լեզվական կարողությունների զարգացման նպատակով վերը թվարկած բոլոր մեթոդներն էլ կարևոր են և օգտակար: Յուրաքանչյուր մեթոդ յուրովի է զարգացնում և նպաստում խոսքային գործունեության ուսուցման և կատարելագործման գործին: Սովորողների բանավոր արդյունավետ հաղորդակցությունն ապահովելու համար այն անհրաժեշտ է ձևավորել ու զարգացնել ուսուցման բոլոր աստիճաններում՝ կիրառելով խոսքային կարողությունների բոլոր մեթոդներն ու հնարները: Որոշակի արդյունքի հասնելու համար ամենակարևորը ուսուցչի դերը դերն է, նրա մեթոդական ճիշտ ընտրությունը: Ուսուցիչը պիտի կարողանա սեր և հետաքրքրասիրություն առաջացնել անգլերեն լեզվի հանդեպ: Երկարամյա աշխատանքային փորձը նաև ցույց է տվել, որ բանավոր հաղորդակցման հարցում հաջողությունների են հասնում այն աշակերտները, որոնք համառորեն և մշտական աշխատում են բառարաններով, կարդում գեղարվեստական գրքեր, դիտում ֆիլմեր:

Խոսքային հաղորդակցման ուսուցումը բարդ, բազմաբաղադրիչ երևույթ է, որի բոլոր դատողությունները հանդես են գալիս միասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. - Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973թ.
2. Օտար լեզուները Հայաստանում Երևան, 2009թ.
3. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար
4. Երևան, 2004թ.
5. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները
6. Երևան, 2004թ.
7. Արշակյան Ա.- Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա Երևան, 2008թ.
8. Ամիրջանյան Յ. – Մանկավարժություն, Երևան, 2005թ